Հաստատում եմ՝ **31. 08. 2023 թ.**

Դպրոցի տնօրեն՝ Ս. Հարությունովա

Ընդունված է մանկխորհի որեշմամբ **31.08.2023թ.**

Կ.Տ.

ԵՐԵՎԱՆԻ Հ. 50 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ 2023-2024 ՈՒՍՏԱՐՎԱ ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Երևանի հ. 50 հիմն. դպրոցի 2022-2023 ուստարվա կատարած ուսումնադաստիարակչական աշխատանքների

Ժամանակակից դպրոցի գործունեությունը չի սահմանափակվում գիտելիքներ տալով, ուստի կիրառելով դասավանդման արդյունավետ մեթոդներ և ժամանակակից տեխնոլոգիաներ՝ նպաստում է սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորմանը, դաստիարակում հայրենասիրություն, ձևավորում պատշաճ վարքագիծ և վարվելակերպ:

Ազգի և պետության գեղեցիկ ու բարվոք ապագայի կերտումը էապես պայմանավորված է նրա քաղաքացիների կրթության և դաստիարակության մակարդակով: Այդ խնդրի լուծումը հիմնականում դրված է դպրոցի, ընտանիքների և հասարակության լայն խավերի վրա: Նրանք միասնական ջանքերով պետք է աջակցեն և ամենօրյա օգնություն ցուցաբերեն, որպեսզի աճող սերնդի կրթության ու դաստիարակության անչափ կարևոր գործը լինի ճիշտ կազմակերպված: Հուսալի ապագա ունենալու համար հարկավոր է սերունդների համար ապահովել հիմնավոր կրթություն:

Ելնելով մեր առջև դրված խնդիրներից և նպատակներից՝ դպրոցում **2022-2023** ուստարվա ընթացքում կատարվել են բազմաբնույթ և բազմաբովանդակ ուսումնադաստիարակչական աշխատանքներ:

Ժամանակին կազմվել և տնօրենի հաստատման է ներկայացվել փոխտնօրենների ,մ/մ-ների աշխատանքային պլանները:Հաստատվել են ուսուցիչների առարկայական թեմատիկ պլանները:

Կատարվել է սովորողների ուսումնական ծանրաբեռնվածության կանոնակարգում: Համակարգվել է ուսուցիչների կազմը,վերջնական տեսքի է բերվել դասաբաշխումը և ժամանակին կազմվել է դասացուցակը:

Կանոնավոր իրականացվել է ներդպրոցական վերահսկողությունը՝մ/մ-ների մասնախմբերի համակարգված գործունեության,բոլոր առարկաների դրվածքի ուսումնասիրությունների,լսված դասաժամերի,դաս-ցերեկույթների,բազմաբնույթ միջոցառումների, գործնական,թեմատիկ աշխատանքների և տրվել է հանձնարարականներ ու մեթոդական ցուցումներ:

2022թ-ի օգոստոսի **20-31**-ի ընթացքում համակարգվել է դպրոցի մանկավարժական և աշակերտական կազմը,ճշտվել շարժը:Ստուգվել է նաև դասագրքերի ապահովությունը,առարկայական կաբինետների սանիտարական վիճակը:Դպրոցի ոչ մի աշակերտ չի մնացել առանց գրքերի:

2022թ.օգոստոսի **31**-ի մանկխորհի նիստում հաստատվել է **2022-2023** ուստարվա դպրոցի աշխատանքային տարեկան պլան-ծրագիրը:

Կատարվել են առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ուսումնառության կազմակերպում և ԱՈՒՊ-ի գործողությունների քննարկում և կազմում/**9**ա -րդ դաս.աշակերտ Համբարձումյան Հարություն և **9**բ դաս.աշակերտ Մկրտչյան Նարեկ:

Ուսումնական որակի ուսումնասիրության և սովորողների կողմից անհատական աշխատանքների կատարման վերահսկողություն է կատարվել

Ուստարի սկսվել էԳիտելիքի օր,սեպտեմբերի **1**-ի տոնական միջոցառմամբ,որին ներկա էին բազմաթիվ ծնողներ,նախկին տարիների շրջանավարտներ,հյուրեր:

Ուսումնական որակի ուսումնասիրության և սովորողների կողմից անհատական աշխատանքների կատարման վերահսկողություն է կատարվել

"Տեխնոլոգիա","Երաժշտություն","Աշխարհագրություն","Հայոց պատմություն","Ֆիզկուլտուրա","Ռուսաց լեզու" առարկաներից։

Ուսումնասիրվել է ուսուցիչների կոմպլեքս աշխատանքը՝կապված աշակերտների կարդալու տեխնիկայի հետ։Ստուգվել է նաև աշակերտների կարդալու տեխնիկան օտար լեզուներից՝"Ռուսաց լեզու"/3-4դդ./,"Ֆրանսերեն"/4-5դդ./,"Անգլերեն"/5դաս./:

Անցկացվել են գրավոր աշխատանքներ տնօրենության կողմից "Մայրենի" և"Մաթեմատիկա" առարկաներից 5 դասարանում։

Կազմակերպվել է "Պեպո" ներկայացման դիտում և գրքի քննարկում։

Ուսուցչի օրվա կապակցությամբ անցկացվել է դաս-վիկտորինա "Մրցում են ուսուցիչները" խորագրով։

Անցկացվել է հետազոտական աշխատանք "Ֆրանսերեն" առարկայից՝"Ազնավուրը իմ աչքերով" :

Համակարգչային բաց դասեր անցկացվել են հետևյալ առարկաներից (ընդ որում համակցված)՝

1. «Մայրենի և կերպարվեստ» (6-րդ դաս. ուս.՝ Օվ. Հարությունյան, դասվար՝ Շ. Սողոյան)։
2. «Ռուսաց լ. և քիմիա» (8-րդ դաս. ուս.՝ Ս. Հարությունովա, Հ. Ասատրյան)։
3. «Ա-ա» հնչյուն - տառի շնորհանդես (1-ին դաս. դասվար՝ Փ.Սողոյան)։
4. «Աշխարհագրություն և մաթեմատիկա» (6-րդ դաս. ուս.՝ Շ. Գաբոյան, Ռ. Մանուչարյան)։

Անցկացվել է վերահսկողություն ուսուցման որակի, միջառարկայական կապերի և սովորողների կողմից անհատական աշխատանքների կատարման գործընթացի հետևյալ առարկաներից՝

1. «Երկրաչափություն» (7-8-րդ դդ. ուս.՝ Ռ. Մանուչարյան, Շ. Բաբայան)։
2. «Մայրենի» (5-6-րդ դդ. ուս.՝ Օվ. Հարությունյան, Ա. Օհանյան)։
3. «Հասարակագիտություն» (8-9-րդ դդ. ուս.՝ Ք. Գևորգյան)։
4. «Մաթեմատիկա» (1-4-րդ դդ. դասվարներ)։

Բոլոր վերը նշված առարկաների վերահսկողության ընթացքում՝ դասերը նախապես պլանավորված են եղել, որը ցուցանիշ է ուսուցչի թե՛ կարգապահ, թե՛ մասնագիտական ճիշտ մոտեցումը դասապրոցեսի նկատմամբ։

Ուսումնական հաստատության և դասարանի մակարդակներում ուսումնական գործընթացի համակարգված հսկողության իրականացում կատարվել է բոլոր ամիսների ընթացքում, որոնցից են եղել գործնական աշխատանքների կատարման վերահսկողությունը մ/մ նախագահների կողմից։Բոլորիս հայտնի է, որ գործնական աշխատանքները երբեմն իրենց բովանդակությամբ ավելի բարդ են, որովհետև սովորողներից ակնկալվում է ոչ միայն գիտելիք, այլև՝ գիտելիքը կիրառելու հմտություն և կարողություն, ուստի հարկ եմ համարում գործնական աշխատանքների վերահսկողությանը լուրջ վերաբերվել։ Տրվել են գրավոր աշխատանքներ տնօրենության կողմից հետևյալ առրկաներից՝

1. «Անգլերեն» (5-9-րդ դդ. ուս.՝ Ա. Առուշանյան)։
2. «Մայրենի» (6-րդ դաս. ուս.՝ Օվ. Հարությունյան)։
3. «Երկրաչափություն» (7-9-րդ դդ. ուս.՝ Ռ. Մանուչարյան, Շ. Բաբայան)։

Գրավոր աշխատանքները կազմվել են դասավանդող ուսուցիչների կողմից քննարկվել՝ մ/մ նիստերում, ապա տրվել՝ տնօրենի հաստատմանը։

Արդյունքները քննարկվել են մ/մ նիստերում և գնահատվել են բավարար։

Նոյեմբեր ամսվա ընթացքում կատարվել են դպրոցական առարկայական օլիմպիադայի մասնակիցների ընտրություն, նախապատրաստում և անցկացում։

Հայոց լ. 07.11.2022թ.
10աշակերտ
Ռուսաց լ. 09.11.2022թ.
3 աշակերտ
Ֆրանսերեն 10.11.2022թ.
7 աշակերտ
Գրականություն 08.11.2022թ.
10 աշակերտ
Անգլերեն 11.11.2022թ.
3 աշակերտ
Պատմություն 14.11.2022թ.
3 աշակերտ

Ուսումնական առարկաների ուսուցման որակի, սովորողների կողմից անհատական աշխատանքների կատարման վերահսկողություն կատարվել է հետևյալ առարկաներից՝

1. «Քիմիա» (**7-9**-րդ դդ. ուս.՝ Հ. Ասատրյան)։
2. «Ֆրանսերեն» (**3-4**-րդ դդ. ուս.՝ Ռ. Հովսեփյան)։
3. «Ինֆորմատիկա» (**6-9**-րդ դդ. ուս.՝ Մ. Ալեքսանյան)։
4. «ՆԶՊ» (**8-9**-րդ դդ. Զինղեկ՝ Ի. Պողոսյան)։

Վերը նշված առարկաների վերահսկողության ընթացքում զուգահեռ անցկացվել է նաև համակարգչային բաց դասեր։ Բոլոր դասերն էլ պլանավորված են եղել՝ նշված նպատակները մեթոդները միջառարկայական կապերը։

1. «Քիմիա» (**8**-րդ դաս. ուս.՝ Հ. Ասատրյան)։
2. «Ինֆորմատիկա» (**6-9**-րդ դդ. ուս.՝ Մ. Ալեքսանյան)։

Յուրաքանչյուր առարկայից, թե ո՞ր դասարանում պետք է գրավոր աշխատանք անցկացվի որոշվել է մ/մ նիստում տարեկան աշխատանքային պլանը կազմելիս։

Ուսուցչի կողմից իր դասավանդած առարկայի ուսուցման և ուսումնական գործընթացում ուսուցման նոր մեթոդների և տեխնոլոգիաների ներդրման ապահովում և վերահսկում կատարվել է **1**-ին դասարանում։Ուսումնասիրվել են թվուսուցման և տառուսուցման մեթոդները (Դասվար՝ Փ. Սողոյան)։ Ուսուցման ընթացքում անցկացվել են համակարգչային դասեր, որոնք հագեցված են եղել հետաքրքիր սահիկներով, տեսանյութերով, մեթոդներով, որոնք էլ ավելի արդյունավետ են դարձրել դասապրոցեսը։

Պարբերաբար կատարվել են մեթոդական աշխատանքների հսկողություն՝ ըստ կիսամյակային աշխատանքային պլանների։Առաջին կիսամյակում չկատարված աշխատանքներ չունենք։

Չնայած նրան, որ ուսումնադաստիարակչական պլանը կազմվել էր ամբողջ ուսումնական տարվա կտրվածքով, սակայն **2**-րդ կիսամյակի աշխատանքները ներկայացվել են քննարկման։

Կատարվել է **2**-րդ կիսամյակի դասաբաշխում, որի հիման վրա **2**-րդ կիսամյակի ուսումնական պարապունքների դասացուցակը ևս փոփոխության է ենթարկվել։

Ստուգվել են **2**-րդ կիսամյակի ուսուցիչների առարկայական թեմատիկ պլանները, տրվել են տնօրենի հաստատմանը։

Անցկացվել է ուսումնական աշխատանքների նկատմամբ հսկողություն հետևյալ առարկաներից «Երգ» (**1-4**-րդ դդ. ուս.՝ Մ. Հայրապետյան)

«Բնագիտություն» (**5-6**-րդ դդ. ուս.՝ Շ. Գաբոյան)

«Ռուսաց լ.» (**2-4**-րդ դդ. ուս.՝ Ս. Հարությունովա, Է. Ջումշուդյան)։

Հսկողության ընթացքում ուսումնասիրվել է ուսուցիչների դասավանդման մեթոդիկան, օրվա պլանի առկայությունը, միջառարկայական կապերի առկայությունը, աշակերիների պատրաստվածությունը ու ակտիվությունը դասապրոցեսի ընթացքում։ Դասապրոցեսի վերահսկողություն է կատարվել համակարգչային բաց դասերի նկատմամբ։

Անցկացվել է համակարգչային համակցված բաց դաս՝

«ՀԵՊ, կերպարվեստ և գրականություն» առարկաներից (**7**-րդ դաս. ուս.՝ Օվ. Հարությունյան, Ք. Գևորգյան, Տ. Մաթևոսյան),

«Բնագիտություն» (**5-6**-րդ դդ. ուս.՝ Շ. Գաբոյան),

«Մայրենի» (**6**-րդ դաս. ուս.՝ Օվ. Հարությունյան),

«Գրականություն» (**7-8**-րդ դդ. ուս.՝ Օվ. Հարությունյան, Ա. Օհանյան),

«Հայոց պատմություն» (**8**ա-րդ դաս. ուս.՝ Ք. Գևորգյան),

«Ռուսաց լ.» (**3**ա-րդ դաս. ուս.՝ Է. Ջումշուդյան),

«Անգլերեն» (**5-6**-րդ դդ. ուս.՝ Ա. Առուշանյան),

«Ֆրանսերեն» (**4**-րդ և **7**-րդ դդ. ուս.՝ Ռ. Հովսեփյան),

«Կերպարվեստ» (**2**-րդ, **7**-րդ դդ. ուս.՝ Շ. Սողոյան, Տ. Մաթևոսյան),

«Տեխնոլոգիա» (**5**-րդ դաս. ուս.՝ Փ. Սողոյան, Ք. Վարոսյան),

«Շախմատ» (**2-3**-րդ դդ. ուս.՝ Շ. Սողոյան)։

«Երկրաչափություն» (**9**աբ-րդ դդ. ուս.՝ Շ. Բաբայան)։

Կատարվել է ուսուցիչների աշխատանքային գործունեության վերահսկողություն, որի ընթացքում ստուգվել է թեմատիկ գրավոր աշխատանքների բովանդակությունը՝ ըստ չափորոշչային պահանջների և ծավալի։

Սովորողների առաջադիմության նկատմամբ վերահսկողություն կատարվել է գրավոր աշխատանքների միջոցով, որոնք տրվել են տնօրենության կողմից հետևյալ առարկաներից՝

«Ռուսաց լ.» (**2-4**-րդ դդ. ուս.՝ Ս. Հարությունովա, Է. Ջումշուդյան)

«Բնագիտություն» (**6**-րդ դաս. ուս.՝ Շ. Գաբոյան)։ Գրավոր աշխատանքների արդյունքները քննարկվել են մ/մ նիստերում։

Հսկողություն իրականացվել է հետևյալ առարկաներից՝

«Հայոց լեզու» (**7-9**-րդ դդ. ուս.՝ Օվ. Հարությունյան, Ա. Օհանյան)

«Ֆիզիկա» (7-9-րդ դդ. ուս.՝ Մ. Ալեքսանյան)

«Տեխնոլոգիա» (7-9-րդ դդ. ուս.՝ Փ. Սողոյան, Շ. Սողոյան, Տ. Մաթևոսյան, Ք. Վարոսյան)

«Ես և շրջակա աշխարհը» (2-4-րդ դդ. ուս.՝ Հ. Ասատրյան, Շ. Գաբոյան):

Բոլոր դասերն էլ նախապես պլանավորված են եղել, նշված՝ յուրաքանչյուր փուլում կիրառված մեթոդները:Առկա են եղել, թե՛ ներառարկայական , և թե՛ միջառարկայական կապերը, որոնք նպաստել են դասապրոցեսի ընթացքում աշակերտների խթանմանը:

Վերը նշված առարկաների դրվածքների շրջանակներում կատարվել է սովորողների առաջադիմության նկատմամբ վերահսկողություն: Տրվել են գրավոր աշխատանքներ տնօրենության կողմից՝

«Հայոց լ. » (7-9-րդ դդ.)

«Ֆիզիկա » (7-9-րդ դդ.)

«Ես և շրջակա աշխարհը » (4-րդ դաս., ուս.՝ Հ. Ասատրյան)

Արդյունքները քննարկվել են մ/մ հերթական նիստերի ընթացքում :

Ուսումնասիրվել են տառուսուցման մեթոդները «Մայրենի » առարկայից (1-ին դաս. դասվար՝ Փ. Սողոյան), «Ֆրանսերեն» առարկայից (3-րդ դաս., ուս.՝ Ռ. Հովսեփյան): «Տեխնոլոգիա» առարկայից անցկացվել է համակարգչային բաց դաս, որի ընթացքում աշակերտները ծանոթացել են թռչնի բների նախապատրաստական աշխատանքի ընթացքին, որից հետո ինքնուրույն պատրաստել են թռչնի բներ (6-րդ դաս., ուս.՝ Շ. Սողոյան, Ք. Վարոսյան):

Մեր դպրոցում արդեն ավանդույթ է դարձել գիրք նվիրելու օրվան նվիրված կազմակերպել հանդիպում 9-րդ դասարանի աշակերտների և նախորդ ուստարվա շրջանավարտների հետ:

Հանդիպման ընթացքում աշակերտները քննարկում են ընթերցած գիրքը կիսվում տպավորություններով, իսկ վերջում փոխանակվում գրքերով (ուս.՝ Ա. Օհանյան, Ք. Գևորգյան):

Կազմակերպվել և անցկացվել է հետազոտական աշխատանք՝ «Թումանյանը մեր սրտում» խորագրով (8բ-րդ դաս. ուս.՝ Ա. Օհանյան), աշակերտները իրենց գիտելիքները փոխանցել են 5-րդ դասարանցիներին:Ներկայացրել Հովհ. Թումանյանի կյանքից հետաքրքիր դրվագներ, առաջադրել հարցեր, բեմադրել հեքիաթներից հատվածներ՝ ժամանակակից մոտիվներով և ինպրովիզներով (ուս.՝ Ա. Օհանյան):

Գիրք նվիրելու օրվա առթիվ անցկացվել է մրցույթ, նվիրված՝ Ստեփան Զորյանին (6-րդ դաս. ուս.՝ Օվ. Հարությունյան):Նախապես հանձնարարվել էր կարդալ հեղինակի գործերից յոթը:Դասարանը բաժանվել էր խմբերի, ընտրել էին անուններ, նշանաբան, կրծքանշաններ էին պատրաստել , ընտրել ավագներ: Մրցույթը բաղկացած էր 4 փուլից թիմերի համար և մեկ փուլ՝ ավագների համար: Հարցերը վերաբերվում էին Զորյանի պատմվածքներին: Ընտրվել էր ժուրիի կազմ, որը գնահատում էր յուրաքանչյուր փուլ:Մրցույթի ավարտին հաղթող թիմը նվեր ստացավ Ստեփան Զորյանի գրքերից մեկը, որը պատրաստել էր VI դաս. դասղեկ՝ Ա. Առուշանյանը:

Դասապրոցեսների վերահսկողությունը կատարվել է համակցված դասերի միջոցով.

«Կերպարվեստ » (**2-3**ա՛Բ-րդ, **5**-րդ և **7**-րդ դդ., ուս.՝ Փ. Սողոյան, Շ. Սողոյան, Ք. Վարոսյան)

«Տեխնոլոգիա» (**3**՛Բ-րդ, **5**-րդ և **7**-րդ դդ. ուս.՝ Ս. Մաթևոսյան, Ք. Վարոսյան)

«Շախմատ » (**3**ա՛Բ-րդ, **4**-րդ դդ. ուս.՝ Փ. Սողոյան, Շ. Սողոյան)

«Ռուսաց լ.» (**8**ա՛Բ-րդ դդ. ուս.՝ Է. Ջումշուդյան)

«Անգլերեն » (**5**-րդ, **8**ա-րդ դդ., ուս.՝ Ա. Առուշանյան)

«Ֆրանսերեն» (**3-6**-րդ դդ., ուս.՝ Ռ. Հովսեփյան)

«Մայրենի» (**4** ժամ) (**3**ա՛Բ -րդ դդ.,դասվար՝ Տ. Մաթևոսյան) և «Մաթեմատիկա» (**3** ժամ) (**3**ա՛Բ -րդ դդ., դասվար՝ Տ. Մաթևոսյան)

«Մայրենի» (**2** ժամ) (**2** -րդ դաս.,դասվար՝ Շ. Սողոյան) և «Մաթեմատիկա» (**3** ժամ) (**2** -րդ դաս., դասվար՝ Շ. Սողոյան)

«Մայրենի» (**1**ժամ) (**1**-ին դաս.,դասվար՝ Փ. Սողոյան) և «Մաթեմատիկա» (**1** ժամ) (**1**-ին դաս., դասվար՝ Փ. Սողոյան)

«Մայրենի» (**3** ժամ) (**6** -րդ դաս., ուս.՝ Օվ. Հարությունյան)

«Գրականություն» (**7** -րդ և **9**-րդ դաս., ուս.՝ Օվ. Հարությունյան, Ա. Օհանյան)

«Մայրենի» (**3** ժամ) (**4**-րդ դաս.,դասվար՝ Ք. Վարոսյան) և «Մաթեմատիկա» (**1** ժամ) (**4** -րդ դաս., դասվար՝ Ք. Վարոսյան)

«Մաթեմատիկա» (**5**-րդ դաս., ուս.՝ Ռ. Մանուչարյան)

«Ես և շրջակա աշխարհը» (**2-3**ա՛Բ -րդ դդ .,ուս.՝ Հ. Ասատրյան, Շ. Գաբոյան)

«Ֆիզիկա» (**8**ա՛Բ -րդ դաս., ուս.՝ Մ. Ալեքսանյան)

«Երկրաչափություն» (**6** ժամ) (**8**Բ –րդ, **9**ա՛Բ-րդ դդ , ուս.՝ Շ. Բաբայան)։

«Գրականություն» (**7-9** -րդ դդ., ուս.՝ Օվ. Հարությունյան, Ա. Օհանյան)

«Ֆրանսերեն» (**5-9** -րդ դդ., ուս.՝ Ռ. Հովսեփյան)

«Մաթեմատիկա» (**5-6** -րդ դդ., ուս.՝ Ռ. Մանուչարյան)

«Մայրենի» (**1-3** -րդ դդ., դասվարներ)

Վերահսկողության ընթացքում ստուգվել են օրվա դասի պլանների առկայությունը, կիրառված մեթոդները աշակերտների պատրաստվածությունը և ակտիվությունը դասապրոցեսի ընթացքում։

Սովորողների առաջադիմության նկատմամբ վերահսկողություն է իրականացվել գրավոր աշխատանքների մջոցով, որոնք տրվել են տնօրենության կողմից՝

«Գրականություն» (**7-9** -րդ դդ., ուս.՝ Օվ. Հարությունյան, Ա. Օհանյան)

«Մաթեմատիկա» (**6** -րդ դաս., ուս.՝ Ռ. Մանուչարյան)

«Ֆրանսերեն» (5-7 -րդ դդ., ուս.՝ Ռ. Հովսեփյան) տրվել են ստուգարքային աշխատանքներ՝ ստուգելու սովորողների բառապաշարը տվյալ առարկայից, իսկ 8-9-րդ դդ. գրավոր աշխատանքը տրվել է թեստային աշխատանքի ձևով: Գրավոր աշխատանքի արդյունքները քննարկվել են մ/մ հերթական նիստերում:

Կազմակերպվել է այցելություն «Ինժիներական քաղաք» (գիտությունների թանգարան, 7-րդ և 8բ-րդ դասարաններ, ուս.՝ Շ. Բաբայան), որի նպատակն էր ծանոթացնել աշակերտներին ժամանակակից մասնագիտություններին, տեսնել դրանց միջոցով ստեղծվող պրոդուկտները զգալ դրանց ստեղծման վայրում աշխատելու հաճույքը, գիտության գրավչությունը:

Կազմակերպվել է այցելություն Ճարտարապետական համալսարան (8բ-րդ դաս. ուս.՝ Մ. Ալեքսանյան), որի նպատակն էր ծանոթանալ համալսարանի առօրյա կյանքին, ուսանողների աշխատանքներին, լսել են դասախոսություններ և կատարել փորձեր ֆիզիկայից:

Ամփոփել են «Ֆրանսերեն» առարկայից տրված հետազոտական աշխատանքի 3-րդ փուլը, որը վերնագրել էինք «Գուշակիր մեղեդին » (8աբ-րդ դաս., ուս.՝ Ռ. Հովսեփյան):

Աշակերտներին ուսուցչուհին հանձնարարել էր նախապես ուսումնասիրել Շ. Ազնավուրին երգացանկից ստեղծագործություններ՝ ուսումնասիրելու ստեղծման պատմությունը, սովորելու փոքր հատված երգից :Երրորդ փուլում հաղթող ճանաչվեց 8բ-րդ դասարանը:

Դասապրոցեսների վերահսկողությունը կատարվել է համակարգչային դասերի դասալսումների միջոցով հետևյալ առարկաներից.

«Կերպարվեստ », «Տեխնոլոգիա», «Շախմատ », «Մայրենի» և «Մաթեմատիկա, «Գրականություն», «Անգլերեն», «Ֆրանսերեն», «Աշխարհագրություն», «Կենսաբանություն», «Երկրաչափություն» :

Բոլոր դասերն էլ պլանավորված են եղել, նշված՝ նպատակներն ու վերջարդյունքները առկա են եղել միջառարկայական կապեր, ստուգվել է նաև սովորողների կողմից անհատական աշխատանքների կատարման ընթացքը:

Տրվել են գրավոր աշխատանքներ տնօրենության կողմից՝

«Կենսաբանություն» (7-8աբ-րդ դդ., ուս.՝ Լ. Ղազարյան)

«Հանրահաշիվ» (7- 8-րդ դդ., ուս.՝ Ռ. Մանուչարյան, Շ. Բաբայան) առարկաներից: Գրավոր աշխատանքների արդյունքները քննարկվել են մ/մ նիստերում:

Սովորողների մոտ ձևավորված գիտելիքների, հմտությունների, դիրքորոշման, արժեքային մոտեցումների ուսումնասիրության և դիտարկման նպատակով անցկացվել են «Մայրիկ» գրքի քննարկում, կազմակերպվել է ֆիլմի դիտում (9աբ-րդ դդ., ուս.՝ Ա. Օհանյան), ինչպես նաև անցկացվել է համակարգչային բաց դաս «Ֆրանսերեն» առարկայից՝ Ա. Վերնոյի կյանքի և գործունեության ճանաչման նպատակով (8աբ-րդ դդ., ուս.՝ Ռ. Հովսեփյան):

Ստուգվել է տառաճանաչությունը և գրաճանաչությունը օտար լեզուներից՝ «Ռուսաց լեզու» (2-րդ դաս., ուս.՝ Է. Ջումշուդյան), «Ֆրանսերեն» (3աբ-րդ դաս., ուս.՝ Ռ. Հովսեփյան): Վերը նշված դասարաններում՝ եղել են 2-3 աշակերտներ, որոնք դժվարացել են նշել և գրել առաջադրված հնչյուն-տառը, ուստի առաջարկություն է արվել ուսուցիչներին լրացուցիչ աշխատանքներ հանձանրարել՝ տառաճանաչության և գրաճանաչության գիտելիքները ավելացնելու նպատակով:

Կատարվել է վերահսկողություն ուսումնական առարկաներից թեմատիկ գրավոր և գործնական աշխատանքների բովանդակության վերաբերյալ:

Անցկացվել է հետազոտարական աշխատանք «Կենսաբանություն» առարկայից՝ «Վիտամիններ» թեմայով (8ա,բ-րդ դդ., ուս.՝ Լ. Ղազարյան): Աշակերտների մի մասը աշխատանքները ներկայացրել են պաստառի ձևով, մյուսները սահիկաշարի միջոցով՝ ուսուցչի կողմից տրված բաղադրիչների հիման վրա:

Անցկացվել է միջոցառում՝ նվիրված մայրություն տոնին՝ «Մայր իմ սուրբ» խորագրով (3ա,բ-րդ դդ., դասվար՝ Տ. Մաթևոսյան):

Դասապրոցեսների վերահսկողությունը կատարվել է համակարգչային դասերի դասալսումների միջոցով հետևյալ առարկաներից.

«Կերպարվեստ » 6-ժամ (1- 7-րդ դդ., ուս.՝ դասվարներ)

«Տեխնոլոգիա» 5 ժամ (1-5-րդ դդ. ուս.՝ դասվարներ Փ. Սողոյան, Շ. Սողոյան, Տ. Մաթևոսյան)

«Շախմատ » 6 ժամ (2-4-րդ դդ. ուս.՝ Փ. Սողոյան, Շ. Սողոյան)

«Մայրենի» 16 ժամ (1-4-րդ դդ.,դասվարներ)

«Մաթեմատիկա» 12 ժամ (1-3 -րդ դդ., դասվարներ՝ Փ. Սողոյան, Շ. Սողոյան ,

Տ. Մաթևոսյան)

«Մայրենի» 2 ժամ (5-6-րդ դդ. ուս.՝ Օվ. Հարությունյան, Ա. Օհանյան)

«Գրականություն» 1 ժամ (ուս.՝ Օվ. Հարությունյան)

«Հայոց լեզու» 1 ժամ (ուս.՝ Օվ. Հարությունյան)

«Անգլերեն» 3 ժամ (5-րդ և 8-րդ դաս., ուս.՝ Ա. Առուշանյան)

«Ֆրանսերեն» 19 ժամ (3-9-րդ դդ., ուս.՝ Ռ. Հովսեփյան)

«Աշխարհագրություն» 1 ժամ (6-րդ դաս., ուս.՝ Շ. Գաբոյան)

«Ֆիզիկա» 1 ժամ (8ա-րդ դդ., ուս.՝ Մ. Ալեքսանյան)

«Երկրաչափություն» 5 ժամ (7-րդ, 8բ –րդ, 9ա,բ-րդ դդ., ուս.՝ Շ. Բաբայան)

«Հանրահաշիվ» 2 ժամ (7-րդ դաս., ուս.՝ Շ. Բաբայան)

Ուսումնական աշխատանքների ընթացքի նկատմամբ հսկողություն իրականացվել է հետևյալ առարկաներից՝

«Կերպարվեստ» (1-7-րդ դդ., դասվարներ)

«ՀԵՊ» (5- 9-րդ դդ., ուս.՝ Ք. Գևորգյան)

«Կերպարվեստ» առարկայի վերահսկողությունն անցկացվել է համակարգչային բաց դասերի միջոցով, որի ընթացքում մեր դասվարները ցուցաբերել են բավականին հմուտ դասավանդման միջոցներ և գործիքներ՝ «Կերպարվեստ» առարկան ավելի հետաքրքիր և բազմաբովանդակ անցկացնելու համար: Զուգահեռ, անցկացվել են գործնական աշխատանքների կատարման ընթացքի վերահսկողություն: Անցկացվել է գործնական աշխատանք՝ «Հովհաննես Թումանյան» վերնագրով, հենց Հովհաննես Թումանյանի տուն-թանգարանում (4-րդ դաս., դասվար Ք. Վարոսյան):

Սովորողների մոտ ձևավորված գիտելիքների ուսումնասիրության և դիտարկման նպատակով անցկացվել են գրավոր աշխատանքներ տնօրենության կողմից՝

«Անգլերեն» (8ա,բ-9ա,բ-րդ դդ., ուս.՝ Ա. Առուշանյան): Փորձնական գրավոր աշխատանքներ «Մայրենի և մաթեմատիկա» առարկաներից (4-րդ դաս., դասվար Ք. Վարոսյան) և «Հայոց լեզու և մաթեմատիկա» առարկաներից (9ա,բ-րդ դդ., ուս.՝ Ա. Օհանյան, Ռ. Մանուչարյան, Շ. Բաբայան)

Տրված գրավոր աշխատանքների արդյունքները քննարկվել են մ/մ նիստերում: Ողջ մայիս ամսվա ընթացքում նախապատրաստվել ենք գիտելիքների ստուգմանը (4-րդ դաս.) և պետական ավարտական քննություններին (9ա,բ-րդ դդ.):

Անցկացվել է համակարգչային բաց դաս՝ նվիրված Այբբենարանին, որի ընթացքում ստուգվել է նաև աշակերտների ընդհանուր գիտելիքները (1-ին դաս., դասվար՝ Փ. Սողոյան):

Անցկացվել է վիկտորինա, «Ֆրանսերեն» առարկայից, «Բարև Փարիզ» խորագրով (6-րդ դաս., ուս.՝ Ռ. Հովսեփյան):Մրցույթն իր ֆորմատով և բովանդակությամբ շատ հետաքրքիր էր, որը նպաստեց աշակերտների ճանաչողական և ինտելեկտուալ գիտելիքների զարգացմանը:

Արտահերթ մանկխորհրդի ժամանակ, դասվար-դասղեկները հանդեց եկան սովորողների բացակայությունների վերաբերյալ հաշվետվությամբ, որից պարզ դարձավ, որ դպրոցում ունենք 4 աշակերտներ, որոնք ունեն 120-200 ժամ բացակայություն :

Այդ աշակերտներն են՝

1. Մկրտչյան Մոնիկա- (3բ-րդ դաս. -150 ժամ)
2. Խաչատրյան Գոռ -(3բ-րդ դաս. -173 ժամ)
3. Պետրոսյան Գոռ - (7-րդ դաս. -189 ժամ)
4. Գրիգորյան Ռուբեն -(8ա դաս. - 170 ժամ)

Վերը նշված աշակերտները հանձնել են քննություններ «Մայրենի» (3-րդ դաս.), «Հայոց լեզու և գրականություն» (7-8-րդ դդ.) և «Մաթեմատիկա» առարկաներից, իսկ մնացած առարկաներից՝ ամփոփիչ ստուգողական աշխատանքներ:

Աշխատանքները կազմվել են մ/մ նիստերում 3 տարբերակով, դասավանդող ուսուցչի կողմից, քննարկվել են և տրվել՝ տնօրենի հաստատմանը: 3բ-րդ դաս. աշակերտներ՝ Մկրտչյան Մոնիկան և Խաչատրյան Գոռը բարեհաջող հանձնել են քննություններն ու ամփոփիչ ստուգողական աշխատանքները և փոխադրվել հաջորդ դասարան:Պետրոսյան Գոռը և Գրիգորյան Ռուբենը՝ «Հայոց լեզու և գրականություն» առարկայից ստացել են անբավարար գնահատական , ուստի նրանց տրվել են ամառային առաջադրանք:

Ունենք մեկ աշակերտ՝ Սիմոնյան Կարեն (8ա դաս.), որն ունի 451 ժամ բացակայություն, ըստ կարգի նա համարվում է երկտարեցի:

Հայոց Եղեռնի հիշատակին նվիրված՝ անցկացվել է համակարգչային բաց դաս՝ «Любить Армению по-русски» (8ա,բ դդ. ուս.՝ Է. Ջումշուդյան): Դասի ընթացքում ուսուցչուհին ներկայացրեց այն ռուս գրողներին ովքեր մեծարգանքով են հիշատակում հայ ժողովրդի ապրած ողբերգությունը:

Կազմակերպվել է այցելություն Գ. Սունդուկյանի անվան թատրոն՝ «Մուսալեռան քառասուն օրը» ներկայացում դիտելու (8-9-րդ դդ., ուս.՝ Ք. Գևորգյան, Ա. Օհանյան):

Կազմակերպվել է այցելություն՝ «**Friend house**» ժամանցի վայր, որտեղ 7-րդ դասարանի աշակերտները դասղեկ Օվ. Հարությունյանի հետ անցկացրել են «Մայրիկ» գրքի քննարկումը:

Կազմակերպվել է այցելություն Սարդարապատ՝ մայիսյան հերոսամարտերի **105** – ամյա հոբելյանը հիշատակելու համար (**8-9**-րդ դդ., ուս.՝ Ա. Օհանյան, Ք. Գևորգյան):

Յուրաքանչյուր կիսամյակի վերջում կատարվել է ԿԱՊԿՈՒ սովորող՝ **9**Բ-րդ դաս. աշակերտ՝ Ն. Մկրտչյանի ուսումնառության արդյունքների ամփոփիչ գնահատում: Նարեկն ունի վարքագծային խնդիրներ, սակայն, չնայած բոլոր դժվարություններին, մենք կարողացանք հաղթահարել բոլոր խոչընդոտները և ամենակարևորը, որ մենք սիրեցինք Նարեկին, իսկ նա՝ մեզ: Կարծում եմ Նարեկի հարցում կարողացանք կատարել մեր առաքինությունը:

Դասապրոցեսների վերահսկողությունը կատարվել է համակարգչային դասերի դասալսումների միջոցով հետևյալ առարկաներից.

«Կերպարվեստ » **5**-ժամ (**1- 7**-րդ դդ., ուս.՝ դասվարներ)

«Տեխնոլոգիա» **8** ժամ (**1-7**-րդ դդ., դասվարներ)

«Շախմատ » **6** ժամ (**2-4**-րդ դդ. ուս.՝ Փ. Սողոյան, Շ. Սողոյան)

«Մայրենի» **9** ժամ (**1-4**-րդ դդ., դասվարներ)

«Մաթեմատիկա» **8** ժամ (**1-3** -րդ դդ., դասվարներ՝ Փ. Սողոյան, Շ. Սողոյան ,

Տ. Մաթևոսյան)

«Գրականություն» **1** ժամ (ուս.՝ Օվ. Հարությունյան)

«Անգլերեն» **2** ժամ (**6**-րդ դաս., ուս.՝ Ա. Առուշանյան)

«Ֆրանսերեն» **9** ժամ (**3-9**-րդ դդ., ուս.՝ Ռ. Հովսեփյան)

«Ռուսաց լեզու» **2** ժամ (**8**ԱԲ-րդ դաս., ուս.՝ Է. Ջումշուդյան)

«Կենսաբանություն» **5** ժամ (**7-8**ԱԲ-րդ դդ., ուս.՝ Լ. Ղազարյան)

Ստուգվել են թեմատիկ գրավոր և գործնական աշխատանքների քանակն ու գնահատականների համապատասխանությունը էլեկտրոնային մատյանի հետ:

Պարբերաբար ստուգվել են էլեկտրոնային մատյանները՝ պատշաճ լրացնելու նպատակով, արվել են դիտողություններ այն ուսուցիչներին, ովքեր ժամանակին և պատշաճ չեն լրացրել էլ. մատյանները:

Յուրաքանչյուր ամսվա վերջին շաբաթվա ընթացքում անցկացվել է մ/մ նիստեր, որոնց ընթացքում ստուգվել են կատարված աշխատանքները, քննարկվել և արվել են առաջարկություններ:

Կատարվել է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սողորողների ուսումնառության արդյունքների ամփոփիչ գնահատում անհատական ուսուցման պլանի համաձայն: Մ/մ նիստերում ուսուցիչները բազմիցս անդրադարձել են առկա խնդիրներին, տրվել են լուծումներ: Տարրական մ/մ նիստերում հանդես է եկել ուսուցչի օգնական Ս. Եգանյանը՝ ներկայացնելով աշխատանքները, որոնք արվել են իր կողմից՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների համար:

Կատարվել է վերահսկողություն ուսումնական առարկաներից թեմատիկ գրավոր և գործնական աշխատանքների բովանդակության վերաբերյալ:

Ինչևիցե, յուրաքանչյուր աշխատանքում էլ կլինեն մասնակի թերություններ, բայց դրանք շատ փոքր մասնիկն են կազմում մեր կոլեկտիվի աշխատասիրության և նվիրաբերության դիմաց, որ նրանք կատարում են :

Պետական ծրագրերի կատարողականի մասին

Մ/մ նախագահների հետ ստուգվել է պետական ծրագրերի կատարողականը: Ոչ մի առարկայից պետական ծրագրերի թերակատարում չունենք, ունենք գերակատարում «Կենսաբանություն» առարկայից (7-9-րդ դդ.), որը լրացվել է առաջին կիսամյակի թերակատարումը՝ լրացնելու նպատակով: Փոխարենը՝ «Քիմիա» և «Աշխարհագրություն» առարկաներից, ունենք այս կիսամյակում թերակատարում, որը լրացվել է առաջին կիսամյակում: Վերը նշված երեք առարկաներից ոչ մեկը չունի ծրագրերի թերակատարում:

2022-2023 ուստարվա տարեկան արդյունքների ամփոփում

Տարեսկզբին աշակերտների թիվը կազմել է **281**-ը, տարեվերջին՝ **279**-ը, որոնցից աղջիկ՝ **144**, տղա՝ **135**: Տեղափոխվել են՝ **12**-ը, ընդունվել՝ **10**-ը: Առաջադիմում են **243** աշակերտ, չեն առաջադիմում՝ **9**-ը , **1** առարկայից՝ **5** աշակերտ (Շահինյան Գագիկ **3**բ-րդ դաս., Ավագյան Աննա **5**-րդ դաս., Գիրգորյան Ալեն **6**-րդ դաս., Գալստյան Համլետ **8**բ-րդ դաս., Խալաթյան Վահրամ **8**բ-րդ դաս.), **2** առարկայից՝ **3** աշակերտ (Պետրոսյան Գոռ **7**-րդ դաս., Աբրահամյան Սերգեյ **8**ա-րդ դաս., Գրիգորյան Ռուբեն **8**ա-րդ դաս.):

Հարվածային աշակերտների թիվը կազմում է՝ **84**, իսկ գերազանցիկների թիվը՝ **51**: Առաջադիմությունը կազմում է **96%**, իսկ որակը՝ **54%**:Ընդհանուր բացակայությունների թիվը կազմում է **12177** ժամ:

1-ին բաժին
ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

Հ	ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ	ԿԱՏԱՐՈՂ ԱՆՁ	ՆՇՈՒՄ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ
1	2017թ.ծնված և հայտագրված աշակերտների փաստաթղթերի ընդունում	21. - 07. 2023թ.	Տնօրեն, օպերատոր	
2	Խիստ վերահսկողության սահմանում պարբերաբար ուշացումների - անհարգելի բացակայությունների նկատմամբ	ուսպարում	ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ, դասղեկներ	
3	ՈՒշադրության կենտրոնում պահել չառաջադիմող աշակերտներին՝ հաճախակի ստուգելով նրանց հետ տարվող աշխատանքները	ուսպարում	Տնօրենություն , դասղեկներ, ծնողական խորհուրդ	
4	Պայմաններ ստեղծել դպրոցում սոցիալապես անապահով ընտանիքներին օգնելուն	ուսպարում	Տնօրենություն, ծնողական խորհուրդ	

2-րդ բաժին

ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ	ԿԱՏԱՐՈՂ ԱՆՁ	ՆՇՈՒՄ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ
Կատարել աշխատանքի բաժանում	2023թ. 23.08 -31.08	տնօրեն	
Համակարգել դասարանները 1-ին դաս - 38 աշ. 2-րդ դսա - 29 աշ. 3--րդ դա - 25 աշ. 4ա դաս- 20 աշ. 4բ դաս - 17 աշ. Ընդ. 1-4 - 129 աշ. 5-րդ դաս- 27 աշ. 6-րդ դաս- 27 աշ. 7-րդ դաս- 33 աշ. 8 դասս- 25 աշ. 9ա դաս - 22 աշ 9բ դաս- 20աշ Ընդ. 5- 9 դա 154աշ. Ընդհանուր-283	24.08 -31.08	Տնօրենություն	
Սահմանել աշխատանքային գրաֆիկ ա. դասերը կազմակերպել 1 հերթով բ.պարապմունքների սկիզբը՝ ժ.8.30-ին, 45 րոպե տ-ողությամբ: գ.Դասարանները բաժանել խմբերի	24.08 -31.08 2023թ.	Տնօրենություն	
Նշանակել դասղեկներ - դասվարներ:	24.08 -31.08 2023թ.	Տնօրեն	
ՈՒսումնական գույքը նախապատրաստել նոր ուստարվան:	24.08 -31.08 2023թ.	Տնտեսվար	
Կարգավորել աշակերտների էլեկտրոնային անձնական գործերը	24.08 -31.08	Տնօրեն, օպերատոր	

3-րդ բաժին

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Հ	ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ	ԿԱՏԱՐՈՂ ԱՆՁ	ՆՇՈՒՄ
1	ՈՒսուցիչներին ժամանակին ապահովել ուսումնական ծրագրերով: Աշակերտներին ապահովել դասագրքերով	2023թ. 24.08-31.09.	Տնօրեն, տնօրենի ուսգծով տեղակալ, գրադարանավար, դասղեկներ	
2	Սովորողների գիտելիքների որակը բարձրացնելու նպատակով կատարել դասալսումներ, արդյունքները քննարկել մ/մ նիստերում, մանկխորհրդի նիստերում:	ուստարում	Տնօրենություն, մ/մ նախագահ ուսուցիչներ	
3	Օգնել, հետևել դասղեկներին՝ ժամանակին իրենց աշխատանքային պլանները կազմելու, ներկայացնելու:	24.08-09.09	ՄԿԱ ծով տնօրենի տեղակալ	
4	Ստուգել ծրագրերի կատարողականը, գործնական աշխատանքների կատարողականը, գրավորների տեսակը, քանակը տարբեր առարկաներից, քննարկել մասնախմբերի նիստերում:	ուստարում	Տնօրեն, տնօրենի ուսգծով տեղակալ	

4-րդ բաժին

ՆԵՐԴՊՐՈՑԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Հ	ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏ	ԿԱՏԱՐՈՂ ԱՆՁ	ՆՇՈՒՄ
1.	Կատարել վերջնական դասաբաշխում և կազմել դասացուցակը	24.08.2023թ.	Տնօրեն Տնօրենի ուսգծով տեղակալ	
2.	Հաստատել ուսուցիչների առարկայական թեմատիկ պլանները	01.09.2023թ.	Տնօրեն Տնօրենի ուսգծով տեղակալ	
3.	Առարկայական մեթոդական միավորումների տարեկան պլանների հաստատում	01.09.2023թ.	Տնօրեն	
4.	Ուսումնասիրել դասվարի աշխատանքը՝ կապված 1-ինդասարանցիներ դասապրոցեսին հարմարվելու հետ	Սեպտեմբեր	Տնօրենի ուսգծով տեղակալ	
5.	Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցողների ուսումնարության կազմակերպում և ԱՈՒՊ-ի գործողությունների քննարկում	Օգոստոս	Տնօրենի ուսգծով տեղակալ	
6.	Անցկացնել ծնողական դասարանական ժողովներ և դպրոցի ծնողական ժողովի միջոցով ընտրել դպրոցի ծնողխորհուրդ	Սեպտեմբեր	Տնօրենություն, տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ	
7.	Անցկացնել աշակերտների դասարանական ժողովներ ժողովի միջոցով ընտրել դպրոցի աշխորհուրդ	Սեպտեմբեր	Տնօրենություն, տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ	
8.	Վերահսկողություն դասալսումների միջոցով	Տարվա ընթացքում	Տնօրենի ուսգծով տեղակալ	
9.	Սովորողների ծանրաբեռնվածության կանոնակարգում:	Սեպտեմբեր	Տնօրենի ուսգծով տեղակալ	
10.	Սովորողների առաջադիմության նկատմամբ վերահսկողություն:	Սեպտեմբեր	Տնօրենի ուսգծով տեղակալ	
11.	Սովորողների ուսումնական պարապմունքների մշտադիտարկում:	Սեպտեմբեր	Տնօրենի ուսգծով տեղակալ	
12.	Ուսումնասիրել աշակերտների կարդալու տեխնիկան(2-4դդ.)	Սեպտեմբեր	Տնօրենություն	
13.	Ուսումնասիրել աշակերտների կարդալու տեխնիկան օտար լեզուներից 1.ֆրանսերեն՝4-5դդ. 2.Ռուսաց լեզու-3-4դդ.	Սեպտեմբեր	Տնօրենություն	
14.	Անցկացնել փորձնական գրավոր աշխատանքներ "Մայրենի","Մաթեմատիկա"առարկաներից (5դաս.)	Սեպտեմբեր	Տնօրենություն	

15.	Միջոցառում Անկախության օրվան նվիրված հայց Եռաբլուր	Սեպտեմբեր	Տնօրենություն, տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ	
16.	Անցկացնել փորձնական գրավոր աշխատանքներ՝ Թելադրություն- 5-9 դդ. "Մաթեմատիկա"-6դաս.	Սեպտեմբեր	Տնօրեն, տնօրենի ուսգծով տեղակալ	
17.	Պարբերաբար անցկացնել պոեպիայի երեկոներ հայ բանաստեղծների ստեղծագործություններով	Տարվա ընթացքում	Տնօրենություն, տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ	
18.	Ուսուցչի օրցան նվիրված միջոցառում	Հոկտեմբեր	Տնօրենություն, տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ	
19.	Գրադարանավարի օր	Հոկտեմբեր	Տնօրենություն, տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ	
20.	Անցկացնել "Սպորտլանդիա"(5-9դդ.)	Հոկտեմբեր	Տնօրենություն, տնօրենի ուսգծով տեղակալ	
21.	Ուսուցչի օրվան նվիրված միջոցառում	Հոկտեմբեր	Տնօրենություն, տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ	
22.	Ուսումնական աշխատանքների ընթացքի նկատմամբ հսկողություն՝ "Համաշխարհային պատմություն" "Կենսաբանություն" "Հանրահաշիվ" "Շախմատ" "Մայրենի"1-4դդ. "Ռուսաց լեզու"1-4դդ.	Նոյեմբեր	Տնօրենություն, տնօրենի ուսգծով տեղակալ	
23.	Աշակերտների առաջադիմության նկատմամբ վերահսկողությիուն:	Նոյեմբեր	Տնօրենություն, տնօրենի ուսգծով տեղակալ	
24.	Գործնական աշխատանքների ընթացքի նկատմամբ հսկողություն՝ "Մայրենի"-4դաս. "Հանրահաշիվ"-գրավոր աշխ.տնօր.կողմից "Համաշխարհային պատմություն"գրավոր,6-9դդ. "Կենսաբանություն"7-9դդ.	Նոյեմբեր	Տնօրենություն, տնօրենի ուսգծով տեղակալ	
25.	Առարկայական օլիմպիադայի դպրոցական փուլի նախապատրաստում և անցկացում:	Նոյեմբեր	Տնօրենություն, տնօրենի ուսգծով տեղակալ	
26.	"Մեր իրավունքները ու պարտականությունները" Տեսահոլովակի դիտում և քննարկում:	Նոյեմբեր	Տնօրենություն, տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ	

27.	Հանդուրժականության օրվան նվիրված զրույցներ 5-9դդ.	Նոյեմբեր	Տնօրենություն, տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ	
28.	Ուսումնասիրել "Իմ հայրենիք"-5-6դդ. "Երգ"-5-6դդ "Հայրենագիտություն"-5դաս. Առարկայի դասավանդումը	Դեկտեմբեր	Տնօրենություն, տնօրենի ուսգծով տեղակալ	
29.	Առարկայական օլիմպիադայի դպրոցական փուլի անցկացում և ամփոփում:	Դեկտեմբեր	Տնօրենություն, տնօրենի ուսգծով տեղակալ	
30.	2022-2023 ուստարվա 1 կիսամյակի ընթացքում կատարված ուսումնադաստիրակչական աշխատանքների և աշակերտների առաջադիմության արդյունքների ամփոփում:	Դեկտեմբեր	Տնօրենություն, տնօրենի ուսգծով տեղակալ	
31.	Մոմավառություն և ֆիլմի դիտում 1988թ. երկրաշարժի զոհերին նվիրված	Դեկտեմբեր	Տնօրենություն, տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ	
32.	Ամանորի միջոցառման նախապատրաստում և անցկացում		Տնօրենություն, տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ	
33.	2022-2023 ուստարվա 2 կիսամյակի ընթացքում ուսումնադաստիրակչական աշխատանքների քննարկում	Հունվար	Տնօրենություն, տնօրենի ուսգծով տեղակալ	
34.	2023-2024 ուստարվա ուսպլանի քննարկում	Հունվար	Տնօրենություն, տնօրենի ուսգծով տեղակալ	
35.	Ուսուցիչների 2 կիսամյակի թեմատիկ պլանների հաստատում	Հունվար	Տնօրենություն, տնօրենի ուսգծով տեղակալ	
36.	Տնօրենության կողմից գրավոր աշխատանք "Ֆրանսերեն"-2-4դդ.(տնօր.կողմից)	Հունվար	Տնօրենություն, տնօրենի ուսգծով տեղակալ	
37.	Ուսումնասիրել "Ինֆորմատիկա"առարկայի դասավանդումը		Տնօրենություն, տնօրենի ուսգծով տեղակալ	
38.	Բանակի օրվան նվիրված միջոցառում և հանդիպում 44-օրյա պատերազմին մասնակցած դպրոցի շրջանավարտների հետ	Հունվար	Տնօրենություն, տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ	
39.	Ուսումնասիրել հետևալ առարկաների դրվածքը "Ֆիզիկա"-7-9դդ. "Կերպարվեստ"-1-5,7դդ. "Ես և շրջակա"-2-4դդ. "Անգլերեն"-7-9դդ.	Փետրվար	Տնօրենություն, տնօրենի ուսգծով տեղակալ	
40.	Ուսումնասիրել տառուսուցման մեթոդները "Ֆրանսերեն"առարկայից- 3 դաս.	Փետրվար	Տնօրենություն, տնօրենի ուսգծով տեղակալ	

41.	Գրավոր աշխատանք տնօրենության կողմից՝ "Հայոց լեզու"-7-9դդ. "Ֆիզիկա"-7-9դդ. "Ես և շրջակա աշխարհ"-4դաս.	Փետրվար	Տնօրենություն, տնօրենի ուսգծով տեղակալ	
42.	Այց գրատպության թանգարան(Գիրք նվիրելու օրվան նվիրված)	Փետրվար	Տնօրենություն, տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ դասղեկ	
43.	Գիրք նվիրելու օրվան նվիրված միջոցառում	Փետրվար	Տնօրենություն, տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ դասղեկներ	
44.	Ուսումնասիրել հետևյալ առարկաների դրվածքը՝ "Աշխարհագրություն"-6-9դդ. "Ֆիզկուլտուրա"-6-9դդ. "Ռուսաց լեզու"-5-9դդ. "Հայոց պատմություն"-6-9դդ.	Մարտ	Տնօրենություն, տնօրենի ուսգծով տեղակալ	
45.	Մարտի 8-ի և մայրության և գեղեցկության միամսյակին նվիրված ցուցահանդեսի նախապատրաստական աշխատանքներ	Մարտ	Տնօրենություն, տնօրենի ուսգծով տեղակալ	
46.	Դպրոցի խաչքարի մոտ Ապրիլյան պատերազմի նահատակներին նվիրված մոմավառություն և այց Եռաբլուր	Ապրիլ	Տնօրենություն, տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ	
47.	Անցկացնել ֆուտբոլի ներդպրոցական առաջնություն	Ապրիլ	Տնօրենություն, տնօրենի ուսգծով տեղակալ	
48.	Միջոցառում, նվիրված Հ.Շիրազին:	Ապրիլ	Տնօրենություն, տնօրենի ուսգծով տեղակալ	
49.	Տառաճանաչության և գրաճանաչության Ուսումնասիրութուն օտար լեզուներից. "Ռուսաց լեզու"-2դաս. "Ֆրանսերեն"-3դաս.	Ապրիլ	Տնօրենություն, տնօրենի ուսգծով տեղակալ	
50.	Անցկացնել վոլեյբոլի ներդպրոցական առաջնություն	Մայիս	Տնօրենություն, տնօրենի ուսգծով տեղակալ, Ֆիզկուլտուրայի ուսուցիչ	
51.	Ուսումնասիրել "Կերպարվեստ"-7դաս., "Կենսաբանություն"-8-9դդ.	Մայիս	Տնօրենություն, տնօրենի ուսգծով տեղակալ	
52.	Անցկացնել փորձնական քննություն (գրավոր) "Հայոց լեզու"և"Մաթեմատիկա"	Մայիս		
53.	Գրավոր աշխատանք տնօրենության կողմից. "Անգլերեն"-8-9*դդ.	Մայիս	Տնօրենություն, տնօրենի ուսգծով տեղակալ	

54.	120-200ժամ բացակայություն ունեցող աշակերտների քննությունների քննությունների նախապատրաստում և անցկացում։	Մայիս	Տնօրենություն, տնօրենի ուսգծով տեղակալ	
55.	"Հրաժեշտ Այբբենարանին"միջոցառում	Մայիս	Տնօրենություն, տնօրենի ուսգծով տեղակալ	
56.	"Վերջին դաս"9դդ.	Մայիս	Տնօրեն դասղեկներ	
57.	Ավարտական քննությունների նախապատրաստում և անցկացում	Մայիս-հունիս	Տնօրենություն, տնօրենի ուսգծով տեղակալ	
58.	Ցածր առաջադիմություն ունեցող աշակերտներին ապահովել ամառային առաջադրենքներով	Հունիս	Տնօրենություն, տնօրենի ուսգծով տեղակալ	
59.	Ժամանակավոր դասաբաշխում	Հունիս	Տնօրենություն, տնօրենի ուսգծով տեղակալ,մ/մ նախագահներ	
60.	2023-2024ուստարվա ամփոփում	Հունիս	Տնօրենություն, տնօրենի ուսգծով տեղակալ, տնօրենի ՄԿԱ գծով տեղակալ, մ/մ նախագահներ, դասղեկներ	

5-րդ բաժին

ԱՇԽԱՏԱՆՔ ԾՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ

Հ	ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ	ԿԱՏԱՐՈՂ ԱՆՁ	ՆՇՈՒՄ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ
1	Հրավիրել դասարանական ծնողական ժողովներ, ընտրել խորհրդի անդամներ - նախագահներ:(հեռավար)	06.09-13.09 2023թ.	Դասղեկներ	
2	Անցկացնել ընդհանուր ծնողական ժողով, ընտրել ծնողական խորհուրդ:	13-17.09 2023թ.	Տնօրեն, ծնողխորհուրդ	
3	Ծնողխորհրդի նիստերում քննարկել դպրոցի առջ- ծառացած խնդիրները - օգնել սոցիալապես անապահով ու կարիքավոր աշակերտներին:	ուսպարում	Տնօրենություն, ծնողխորհուրդ	
4	Ապահովել դպրոցի - ծնողների համատեղ գործունեությունը՝ սովորողների ուսուցման ու դաստիարակության գործում:	ուսպարում	Տնօրենություն, ՄԿԱ գծով տնօրենի տեղակալ, դասղեկներ	

6-րդ բաժին

ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՆՅՈՒԹԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ԱՄՐԱՊՆԴՈՒՄ

Հ	ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ	ԿԱՏԱՐՈՂ ԱՆՁ	ՆՇՈՒՄ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ
1	Կազմել դպրոցի 2022-2023 ուստարվա տարիֆիկացիան,հաստիքացուցակը - ներկայացնել քաղաքապետի հաստատմանը:	սեպտեմբեր	Տնօրեն, հաշվապահ	
2	Կազմել դպրոցի ծախսերի 2023 թ. նախահաշիվը - բյուջետային հատկացումների փաստաթղթերը:	դեկտեմբեր	Տնօրեն, հաշվապահ	
3	Աշխատանք տանել դպրոցական գույքի վերանորոգման և պահպանման ուղղությամբ:	ուսպարում	Տնտեսվար	
4	Ապահովել շենքի ջերմային, լուսային - օդային ռեժիմը:	ուսպարում	Տնտեսվար	
5	Կատարել դպրոցի բալանսում եղած գույքի - սարքավորումների հաշվառում:	նոյեմբեր	Հանձնաժողով, տնտեսվար, հաշվապահ	
6	Բարեկարգ վիճակում պահել դպրոցի շենքը, բակը, մարզահրապարակը, հետ-ել անվտանգության տեխնիկայի կանոնների պահպանմանը:	ուսպարում	Տնտեսվար, տեխաշխատողներ	
7	Ապահովել դպրոցի սանիտարահիգիենիկ նորմալ վիճակը - այդ նպատակով ձեռք բերել համապատասխան նյութեր - պարագաներ:	ուսպարում	Տնօրենություն, տնտեսվար, բուժքույր, տեխաշխատողներ	

7-րդ բաժին

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԵՐ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ	ԿԱՏԱՐՈՂ ԱՆՁ	ՆՇՈՒՄ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ
1-ին նիստ 1. 2023-2024 ուստարվա դպրոցի ներքին գնահատման արդյունքների քննարկում 2. Ամառային առաջադրանքների արդյունքների ամփոփում 3. Մանկխորհրդի կազմի նոր ընտրություն և հաստատում 4. 2023-2024 ուստարվա ուսումնադաստիարակչական աշխատանքների աշխատանքային պլանի , ուսպլանի քննարկում,ներքին կանոնակարգի, աշխատանքային ռեժիմի քննարկում - հաստատում 5. Դպրոցի 2023-2024 ուստարվա ուսպլանի, ուսումնական ծանրաբեռնվացության, դպրոցական բաղադրիչի բաշխման,գրավոր թեմատիկ և գործնական աշխատանքների քանակի,ամսվա ընթացքում փոխադարձ դասալսումների քանակի,խմբակների ձևավորման, ներքին աշխատանքային կանոնների և աշխատանքային շաբաթվա տևողության կանոնակարգի ընդունում 6. Այլ հարցեր	31.08.2023թ.	Մանկխորհուրդ	
2-րդ նիստ 1. 2023-2024 ուստարվա առաջին երկու ամիսների արդյունքների ամփոփում 2. ընթացիկ հարցեր	Նոյեմբեր 2023թ.	Մանկխորհուրդ	
3-րդ նիստ 1. 2023-2024 ուստարվա առաջին կիսամյակի արդյունքների ամփոփում 2. Ընթացիկ հարցեր	2024թ. հունվար	Մանկխորհուրդ	
4-րդ նիստ 1. Հունվար-մարտ ամիսներին ուսումնադաստիարակչական - ներդպրոցական վերահսկողության ուղղությամբ կատարված ուսումնասիրությունների արդյունքների ամփոփում 2. Ընթացիկ հարցեր 5-րդ նիստ	27.03 - 29.03 2024 թ.	Մանկխորհուրդ	

1. ՀՀ ԿԳՆ հանրակրթական դպրոցների 2023- 2024 ուստարվա աշակերտների փոխադրման, ամփոփիչ ստուգման, քննությունների անցկացման, փոխադրման - ավարտական կարգի մասին հրահանգի քննարկում - ընդունում 2. 120-200 դասաժամ բացակայություն ունեցող աշակերտներին քննություններին թույլատրելու հարցը: 3. ընթացիկ հարցեր	13.05 2024թ.	Մանկխորհուրդ	
6-րդ նիստ 1. 2-րդ կիսամյակի արդյունքների ամփոփում 2. 1-ին, 2-րդ,3-րդ,5-րդ,7-րդ և 8-րդ դասարանցիներին հաջորդ դասարան փոխադրելու և անբավարար գնահատականներ ունենալու դեպքում ամառային առաջադրանքներ տալու հարցը 3. 4-րդ դասարանի աշակերտներին գիտելիքների ստուգման և ավարտական քննություններին թույլատրելու հարցը 4. Ընթացիկ հարցեր	27.05 - 31.05 2024 թ.	Մանկխորհուրդ	
7-րդ նիստ 1. 4-րդ դասարանի աշակերտներին հաջորդ դասարան փոխադրելու ինչպես նաև 1 կամ 2 առարկաներից անբավարար գնահատականներ ունենալու պատճառով ամառային առաջադրանքներ տալու և 3 ու ավելի անբավարար գնահատականներ ունենալու դեպքում՝ նույն դասարանում թողնելու հարցը 2. 9 դասարանի աշակերտների քննությունների արդյունքների ամփոփում և հիմնական կրթության վկաական տալու մասին 3. Ընթացիկ հարցեր	20.06 - 25.06 2024 թ.	Մանկխորհուրդ	

8-րդ բաժին

ԱՇԽԱՏԱՆՔ ԴՊՐՈՑԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՀԵՏ

Հ	ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ	ԿԱՏԱՐՈՂ ԱՆՁ	ՆՇՈՒՄ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

1	Խորհրդին ներկայացնել 2022-2023 ուստարվա կատարած ուսումնադաստիարակչական աշխատանքների հաշվետվություն:	սեպտեմբեր	Տնօրեն, դպրոցի կառ. խորհուրդ	
2	Դպրոցի խորհրդի նիստ հավանությանը ներկայացնել 2023-2024 ուստարվա տարիֆիկացիան և հաստիքացուցակը:	սեպտեմբեր	Տնօրեն, հաշվապահ, դպրոցի կառ. խորհուրդ	
3	Դիմել խորհրդին՝ գտնել համապատասխան միջոցներ, դիմել բարերարներին, բարեգործներին՝ դպրոցի հոգսերը թեթ-ացնելու և դպրոցը հիմնավերանորոգելու նպատակով:	դեկտեմբեր	Տնօրեն, դպրոցի կառ. խորհուրդ	
4	Դպրոցի խորհրդի նիստում՝ քննարկման դնել դպրոցի 2023 թվականի նախահաշիվը՝ նոր ֆինանսական տարվա կտրվածքով:	2023թ. դեկտեմբեր -2024 թ. հունվար	Տնօրեն, հաշվապահ, դպրոցի կառ. խորհուրդ	